բերեցին Բուղային եւ ապա դրեցին Հասակ դռան վերայ, իսկ մարմինը նետեցին Կուր գետը։ Նա մի ծերունի էր փոքր հասակով, գէր, մեծ գլխով, որ կը ներկէր մուգագոյն վառմայով. նորա գլխատման վերայհսկողն էր Ղամէշ, Բուղայի փոխանորդը։ Քաղաքում այրեցան մօտ 5000 մարդ, որովհետեւ հրդեհը կուպրի անդադար վառուելուց օր եւ գիշեր կը շարունակուէր։ Առաւօտեան եկան Մուղարիբացիք եւ դուրս բերեցին, ով դեռ կենդանի էր, իսկ մեռածների հանդերձները հանեցին։ Իսահակի կինը, որ Սարիրի իշխանի դուստրն էր, մնացել էր Սուղդաբիլում, որ Տփղիսի արեւելեան կողմն է գտանուում։ Այս քաղաքը շինել է Անուշիրուան թագաւորը, իսկ Իսահակ ամրացրել էր, նորա շուրջը փոս փորել եւ քաղաքի մէջ դրել Խուրթեցիներից եւ այլոց պահակ զօրք։ Բուղան շնորհեց բնակիչներին ներումն այն պայմանով, որ նոքա իրանց զէնքերը վայր դնեն եւ գնան, ուր կամենան։

Ապա Բուղան ուղարկեց Զիրակին բազմաթիւ զօրքով Գարդման ամրոցը (որ գտանուում է Տփղիսի եւ Պարտաւի մէջ). Զիրակ առաւ ամրոցը, գերեց նորա իշխան Կարիշին[1] եւ բերեց նորան (գլխաւոր) բանակը։ Ինքն Բուղան արշաւեց Իսայ ի. Իւսուփի, Ստեփաննոսի քրոջ որդու վերայ, որ գտանուում էր Փայտակարանի Քթիշ[2] ամրոցում (նորա եւ Փայտակարանի մէջ տասը, իսկ նորա եւ Պարտաւի մէջ յիսուն փարսախ է). Բուղան պատերազմեցաւ իշխանի հետ, առաւ ամրոցը, ձերբակալեց եւ գերեց

---

[1] Բնագրում՝ Քէրիշ (قريش)։

[2] Բնագրի կէտադրութիւնն անշուշտ սխալ է. փոխանակ "Կապիշ" (كبش) կարդալու է "Կարիշ" (كريش)։ Հմմտ. Թովմայ Արծրունի էջ 178 (Քթիշ)։